



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

\_\_ նոյեմբերի 2017 թվականի №\_\_ Ա  
քաղ. Երևան

**«ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՐԱՍՏԱՆԻՑ  
ՆԵՐԿՐՎՈՂ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վրաստանից ներկրվող և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը վաճառվող էլեկտրական էներգիայի առավելագույն սակագինը սահմանել 25 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 30 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Ընդունել ի գիտություն, որ ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Վրաստանից էլեկտրական էներգիան կներկրվի և կվաճառվի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող տնտեսական կարգավարման շրջանակում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դեկտեմբերի --ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**